

**ՔԱՆԱՀԱՏ-ԳԼԱԶՈՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ**

Ի. Գ. ՂԱՐԻՔՅԱՆ

Որևէ հնագիտական օբյեկտի, անկախ նրա նշանակությունից, պեղումների ընթացքում գտնված առարկաների ուսումնասիրությամբ կարելի է պատկերացում կազմել տվյալ պատմական ժամանակաշրջանի տնտեսության, արհեստի, արվեստի ու առևտրի զարգացման մակարդակի, մասավորապես տրվյալ հնավայրում բնակված մարդկանց զբաղմունքի, ճաշակի, առևտրական կապերի մասին, մանավանդ, եթե հնարավոր լինի որոշ լրացումներ կատարել գրավոր աղբյուրների ընձեռած տեղեկություններով:

Կանխապես անհրաժեշտ է նշել, որ բոլոր առարկաները հողի տակ շուրհն միևնույն դիմացկունությունը, և նրանց մի մասը ժամանակի ընթացքում իսպառ ոչնչանում է (կաշի, փայտ, նուրբ մետաքսաթել և այլ առարկաներ ունհետ կորչում են): Հետևաբար, պեղումների ժամանակ նրանց բացակայությունը չի նշանակում, թե տվյալ բնակավայրի բնակչության կենցաղում դրանք չեն եղել, կամ ընդհակառակը, եթե խեցեղին անոթների և նրանց բեկորների թվաքանակը մեծ է, ապա պիտի ենթադրել, որ խեցեգործությունը խիստ զարգացած է եղել: Պեղումների ընթացքում արհեստի այս կամ այն բնագավառի արտադրանքի գտածոների քանակը, մեր կարծիքով, ուղիղ համեմատական է տվյալ արհեստին անհրաժեշտ հումքի ձեռքբերման դժվարությունների հետ:

Միանգամայն բնական է, ինչպես հնում, այնպես և միջին դարերում մետաղական նյութի հումքի ձեռքբերումը կապված էր բավականին լուրջ դժվարությունների հետ, առավել ևս եթե խոսքը պղնձին, բրոնզին կամ թանկարժեք մետաղներին էր վերաբերում, ապա օրինաչափ է, որ ողջ բնակչությունը իր առօրյա կենցաղում դրանց օգտագործման նկատմամբ հանդես էր բերում առավել ուշադրություն և խնամք, որպեսզի այդ առարկաները չկորչեն կամ անզգուշությունից շանպետքանային: Իսկ եթե, ինչ-ինչ պատճառներով, դադարում էին ծառայել անմիջական նպատակին, ապա վերամշակման էին ենթարկվում, հնարավորության դեպքում վերանորոգվում, իսկ եթե ոչ, ապա կոման ու կոփման կամ վերածուլման օգնությամբ պատրաստում էին մեկ այլ նպատակի համար ծառայող առարկաներ:

Մինչև 20-րդ դարը գյուղերում և ավաններում շրջում էին կաթսայագործներ, դուլագործներ, լամպագործներ և այլն, որոնք փոխարինում էին իրենց արտադրանքը պիտանելիությունից դուրս եկած համանման առարկաներով, իհարկե համապատասխան վճարի պայմաններում: Մեր կարծիքով սխալ են այն մասնագետները, որոնք պնդում են, թե մեր միջնադարյան հնավայրերում առավել զարգացած էր կավագործության արհեստը, քան դատելով պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի քանակով՝ դարբնությունը, պղնձագործությունը կամ ազնիվ մետաղների հետ կապված արհեստ-

յերը: Երբեմն իզակի առարկայի գտածոն ավելի պերճախոս է իր էությամբ, քան հարյուրներով կամ հազարներով գտնված միանման առարկաները:

Ընդհանրապես, արհեստի և նրա արտադրանքի մասին դատողություն անելիս, ինչպես պրոֆ. Կ. Ղաֆադարյանն է նշում, անհրաժեշտ է նկատի ունենալ տվյալ արհեստի երկու տարբեր ձևերը. մեկը բուն արհեստն է՝ իր մասնագետ արհեստավորով, որ ապրում է հիմնականում քաղաքում և առարկաներ է պատրաստում շուկայի համար կամ առանձին պատվիրատուի պահանջարկն է բավարարում, մյուսը տնայնագործն է, որը բնակվելով գյուղերում և փոքր ագարակներում, ավաններում, հաճախ նաև վանական համալիրների մոտ՝ մեծ հմտություն չունի և տվյալ արհեստով զբաղվում է, որպեսզի բավարարի իր շրջապատի առօրյա կարիքները¹:

Ահա այս առումով մենք պետք է դիտենք Թանահատ-Գլաձորի վանական համալիրում պեղումներով հայտնաբերված նյութերն ու արհեստի առարկաները, զանազանելով մասնագետ արհեստավորի և տեղական տնայնագործի արտադրանքը միմյանցից:

Նախապես հարկ է նշել, որ ինչպես և պետք էր սպասել, Գլաձորի հուշարձանախմբի պեղումների ընթացքում համեմատաբար շատ քիչ նյութեր են գտնվել, եթե համեմատելու լինենք միջնադարյան Հայաստանի այնպիսի բնակավայրերի հետ, ինչպիսիք են Դվինը, Անին, Գառնին, Լոռին, Ամբերդը և այլն: Մի կողմից դա կարելի է բացատրել տեղի բնակչության (միաբանություն) ժուժկալ կյանքով ու առտնին իրերի նկատմամբ նրանց ունեցած ոչ մեծ պահանջարկով², մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ Թանահատ-Գլաձորի բնակչությունը (նկատի ունենք վանական միաբանությունը) հանկարծակի չի լքել վանքը և հեռացել այնտեղից, որպեսզի նրա օգտագործած առարկաները տեղում անխաթար մնային: Կյանքը այնտեղ մահացել է դանդաղորեն: Ուստի նրանց օգտագործած պիտանի իրերն էլ կամ տեղափոխվել են այնտեղից հեռացվածների կողմից, կամ շարքից դուրս գալով՝ դեն են նետվել ու անհետ կորել մեզ համար: Զպետք է անտեսել նաև, որ միաբանության ցրվելուց հետո, 18—20-րդ դարերի ընթացքում, այնտեղ բնակություն է հաստատել թրքալեզու մահմեդական բնակչություն և իրենց ավերածություններով և թալանով ի շիք դարձրել լուրջ ու պիտանի առարկաներ գտնելու մեր հույսերը:

Այնուհանդերձ, պեղումների ընթացքում ի հայտ եկած հնագիտական առարկաների ուսումնասիրությունը որոշակի նպաստ կարող է բերել Թանահատ-Գլաձորի վանական կենտրոնի և բարձրագույն դպրոցի պատմական կյանքի տարեգրության ու կառուցապատման դրվագները վերականգնելու համար: Դրանց ուսումնասիրությունը կնպաստի նաև պարզելու միաբանության կապերը հարևան և հեռավոր խոշոր արհեստագործական կենտրոնների հետ, նրանց առևտրական կամ փոխանակային կապերը և փոխազդեցությունները պարզաբանելու:

Ուստի համառոտակի, ընդհանուր գծերով տալիս ենք հնագիտական իրերի բնութագիրը, համեմատում միջնադարյան Հայաստանի մյուս հնավայրերում համանման նյութերի հետ, եթե այդպիսիք կան, փորձում թվագրել, պարզել արտադրության տեղը և ժամանակը, եթե դա հնարավոր է:

Թանահատ-Գլաձորում գտնված մետաղե իրերը շատ սակավաթիվ են:

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, թ. 1, էջ 154:

² Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Երևան, 1986, էջ 155:

Քանկարժեք մետաղներից իրեր և առարկաներ ընդհանրապես չեն հայտնաբերվել: Գտնվածները հիմնականում երկաթից են, պղնձից կամ բրոնզից:

Երկաթե իրերից առաջին հերթին աչքի է ընկնում կեսից կտորված մի դաշույն: Պահպանվել է վերին մասը դաստակի հետ միասին: Երկարությունը 23 սմ է, իսկ դաստակինը՝ 13: Դաստակի վրա պահպանվել է երկու անցք՝ կոթը ամրացնելու համար: Դաստակի զուլսը կորնթարդ է, իսկ միջնամասին միանում է թեք անցումով: Դաստակի բռնակի միջնամասի լայնությունը 2,5 սմ է: Իսկ հաստությունը մասին չենք կարող դատել, որովհետև չեն պահպանվել փայտե կամ ոսկրե այն հատվածները, որոնք գամերով ամրացվել են դաշույնի երկաթե բռնակին: Դաշույնի գործող մասը երկսայրի է ու խիստ տափակ: Նրա լայնությունը 5 սմ է: Գործող մասի կենտրոնից, երկու կողմից անցնում են երեք ակոսավոր փոսիկներ, որոնք բնորոշ են մեր միջնադարյան հնավայրերից գտնված համանման դաշույններին:

Նույն տիպի դաշույններ գտնվել են Ամբերդ բերդ-դղյակի պեղումների ժամանակ³, որոնցից մեր օրինակը տարբերվում է նրանով, որ եթե Ամբերդի դաշույնները բռնակի կողմից դեպի գործող մասը գնալով լայնանում են, ապա սա ընդհակառակը. պարզ երևում է, որ գործող մասը գնալով պետք է նեղանա, և ծայրը բնականաբար վերջանում է սուր մասով: Այս օրինակը առավել նմանվում է Անիի պեղումներից գտնված դաշույնին⁴:

Ուսումնասիրվող դաշույնի թվագրման հարցը խիստ դժվար է, քանի որ այն գտնվել է սբ. Ստեփանոս եկեղեցուց քիչ հեռու, բնակելի մի շենքի արտաքին պատի աակ, հիմքին մոտ: Հետևաբար միայն շերտագրությամբ առաջնորդվելը այստեղ մեզ կհանգեցնի որոշակի սխալ եզրակացության, ուստի մենք այն համեմատելով Անիում և Ամբերդում գտնված դաշույնների հետ՝ թվագրում ենք 13—15-րդ դարերով:

Քանահատ-Գլաձորում գտնվել է նաև մի բահ: Այն համեմատաբար լավ է պահպանվել, և ոչնչով չի տարբերվում ժամանակակից այգեգործական շրջաններում օգտագործվող թափշակավոր բահերից: Նրա կոթառի մի մասը ժամանակին չարդվել է ու նորոգվել: Վրան երևում են նորոգման պարզ հետքերը: Նման տիպի բահ գտնվել է Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ: Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը այն համեմատում է Աղթամարի տաճարի պատերի վրա 10-րդ դարում քանդակված նմանատիպ բահի հետ⁵: Գլաձորում գտնված բահը ոչնչով չի տարբերվում Դվինում գտնված բահից, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ բահերը ձևի տեսակետից խիստ պահպանողական են հղել, ուստի մեր օրինակը թվագրում ենք 13—15-րդ դարերով:

Հաջորդ առարկան, որ գտնվել է Քանահատ-Գլաձորի պեղումների ընթացքում, երկաթե մի մկրատ է, որի գործող մասի ծայրը կտրած է: Պահպանվել են գործող մասի 6 սմ երկարություն և նրա շարունակությունը կազմող երկու թևերը, որոնք իրար հետ նույնպես ամրացված են երկաթե գամի օգնությամբ: Մկրատի թևերի զուխները կտրացված են և միացած իրար, որով ստացվել են 2 սմ տրամագծով օղակներ: Երկաթե մկրատի հայտնաբերումը միջին դարերի հայկական հուշարձաններում նոր երևույթ է: Նման տիպի երկու մկրատ գտնվել է Դվինի պեղումների ժամանակ, և պեղումների ղեկավար Կ. Ղաֆադարյանը այդ առթիվ գրում է. «1948 և 1949 թվական-

³ Տե՛ս Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 84—85:

⁴ Տե՛ս «Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաներ», Եվգենյա Մուշեղյանի աշխատասիրությամբ, Երևան, 1982, էջ 139—140, համ. 1473, 1474, տախտակ 86—40:

⁵ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Աշխ., էջ 156—157, Գլ. 137 և 138: Ինչպես նաև՝ Н. Орбели, Избранные труды, т. I, М., 1968, с. 138 табл. 31:

ներին միջնաբերդում գտնվեցին երկու մկրատ՝ մեկը մեծ և մյուսը՝ փոքր, որոնք իրենց ձևերով և երկարություններով դրեթե շեն տարբերվում այժմյան գործարանային մկրատներից»⁶: Բազմահմուտ հնագետը, ելնելով շերտագրությունից և նրանց հետ գտնված զուգահեռ նյութերից, խնդրո առարկա մկրատները թվագրում է 12—13-րդ դարերով:

Մկրատներ գտնվել են նաև Գառնի ամրոցի միջնադարյան շերտից, և այն առաջին անգամ հրատարակող Բ. Առաքելյանը գրում է. «1950 թ. գտնվածը (№ 1964/85) մկրատի միջին մասն է միացնող գամով կտրիչների և թևերի մնացորդներով: Այս մկրատը, որը գտնվել է երկու մետր խորության վրա հողի լիցքի մեջ, իր թևերի լայն բացվածքով և կտրիչի հետ միանալու ձևով տարբերվում է Գառնիի մյուս մկրատից (որը գտնվել է ուշ միջնադարյան շերտում 0,5 մետր խորության վրա), ինչպես և Դվինում 12—13-րդ դարերի շերտում գտնված մկրատներից, ժամանակով նրանցից պակի հին է և կարող է պատկանել 7—9-րդ դարերին»⁷: Ցավոք հեղինակը չի նկարագրում երկրորդ մկրատը: Բայց նրա մասին կարելի է գաղափար կազմել այն հրատարակող Հ. Պետրոսյանի այն պնդմամբ, որ մկրատը ոչնչով չի տարբերվում ժամանակակից համանման գործիքներից⁸: Եվ իրոք, մեր գտած օրինակը նույնպես պատրաստված է կոման եղանակով, բայց շատ նրբին է ու քիչ է տարբերվում մեր օրերում օգտագործվողներից: Դատելով մկրատի մշակման բարձր տեխնիկայից՝ պետք է կարծել, որ այն բերված է հարևան որևէ խոշոր երկաթագործական կենտրոնից և մասնագետ դարբին արհեստավորի արտադրանք է: Ելնելով մկրատի գտնվելու տեղից, զուգահեռ նյութերից՝ այն կարելի է թվագրել 13—14-րդ դարերով:

Նրկաթից պատրաստված իրերի թվին է պատկանում մի քառաթև խաչ: Խաչի թևերը իրար են միացված գամերի օգնությամբ և ոչ թե կոված են միակտոր երկաթից: Նրա չափերն են՝ երկարությունը 8 սմ, բռնակի հետ միասին՝ 11 սմ: Խաչաթևերի հարաբերությունը հետևյալն է՝ հորիզոնականինը երկուական սանտիմետր, վերինը՝ 2,3 սմ, ներքևինը՝ 5: Խաչաթևերի միացման տեղերում դրանց լայնությունը 0,8 սմ է, իսկ դեպի ծայրերը լայնանում է 1,3 սմ-ի: Խաչի բռնակը չի պահպանվել ամբողջությամբ, հետևաբար մենք չենք կարող գաղափար կազմել նրա օգտագործման նպատակի մասին: Հնարավոր է, որ այս խաչը ձեռքի օգտագործման պարզագույն առարկա էր կամ զուցե ամրացվել է որևէ առարկայի վրա: Նման տիպի խաչեր գտնվել են միջնադարյան տարբեր ժամանակների պատկանող հնավայրերի պեղումներից⁹, բայց դրանք կամ վզից կախելու համար են նախատեսված եղել, ինչպիսիք են Դվինում գտնվածները, կամ կոթառավոր են ու մեծ (Ամբերդ), և ինչպես հնագետներն են պնդում, զորքերի առջևից տարվող խաչեր են եղել:

Մեր կողմից հայտնաբերված խաչը պետք է համեմատել Ամբերդում՝ եկեղեցուց հարավ գտնվածի հետ, որը չափերով համարյա համընկնում է, ուստի, ինչպես Ս. Հարությունյանն է պնդում, «... օգտագործվել է եկեղեցական արարողությունների ժամանակ, քանի որ չափերով փոքր է և գտնվել է եկեղեցու մոտերքից»¹⁰: Գլածորում հայտնաբերված երկաթե խաչը նույնպես

⁶ Կ. Ղաֆադարյան, Աշխ., էջ 159:

⁷ Բ. Առաքելյան, Փ. Կարախանյան, Գառնի 3, Երևան, 1962, էջ 48:

⁸ Տե՛ս Հ. Պետրոսյան, Գառնի 9—14-րդ դարերում, Երևան, 1988, էջ 40, աղ. 16:

⁹ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և քաղաքի պեղումները, էջ 171, Ա. 150, Բ. Առաքելյան, Փ. Կարախանյան, Գառնի 3, էջ 60: Ս. Հարությունյան, Ամբերդ, էջ 91—93:

¹⁰ Ս. Հարությունյան, Աշխ., էջ 91:

գտնվեց 13-րդ դարում վերակառուցված եկեղեցու շրջապատի համապատասխան շերտի պեղումների ժամանակ, ուստի մենք այն թվագրում ենք Գլաձորի գործունեության բուռն ժամանակներով, այն է՝ 13—14-րդ դարերով:

Թանահատ-Գլաձորում գտնված միակ պղնձե առարկան մի փոքրիկ զանգ է, որի մասին մենք հիշատակել ենք հուշարձանի պեղման-մաքրման աշխատանքները նկարագրելիս¹¹: Զանգի չափերն են՝ բարձրությունը 8 սմ, ներքևի բերանի բացվածքը՝ 5 սմ: Նա վերին մասում ունի բռնակատիպ հարմարանք: Զանգը գտնվեց բազիլիկ եկեղեցու և սբ. Ստեփանոսի միջև ընկած տնտեսական շինության մեջ՝ հողի տակ, 1,10 սմ խորությունում: Նրա հետ գտնվեցին նաև երկաթե դանակի ոսկրե կոթառ և այլ մանր առարկաներ:

Հայաստանում գտնված զանգերից աչքի է ընկնում 1875 թ. Գնդեվանքի բակում տնտեսական շենքերի առաջ բացված մի հսկա հոր-թաքստոցից հայտնաբերվածը: Պղնձեղեն սպասքների և անոթների խմբի մեջ եղել են՝ «մի թեշտ, մի լագան, մի ավթալա, մի միջակ սինի, մի կափարիչ, մի կաթսա և չորս փոքրիկ զանգակ»¹²: Այդ զանգակներից մեկի վրա եղել է հետևյալ արձանագրությունը. ԶԶ թվին (=1307) Զսարկալագ Լահանայ յիշէի ի Քրիստոս, որ ստացաւ զսա»¹³: Մյուս երեքը եղել են իրենց չափերով բավականին փոքրիկ զանգակներ, որոնց գտնվելու այժմյան տեղը մեզ անհայտ է:

Ուշագրության արժանի է նաև 19-րդ դարի վերջին Հաղարծնի վանքի պեղման-մաքրման աշխատանքների ժամանակ գտնվածը: Այդ մասին տեղեկանում ենք Մակար Բարխուդարյանցի աշխատությունից, որ գրում է. «Կաթսայի հետ գտած է (Պողոս վարդապետը, պեղման-մաքրման աշխատանքները իրականացողը— Ի. Ղ.) նաև մի զանգակ, որ ունի երկու փուֆ և երկու ֆունտ ծանրություն (32,8 կգ)»¹⁴:

Դեռևս 1908 թ. Հ. Օրբելու վկայությամբ Փոթի—Քութայիսի տարածքից գտնվել էր մի զանգ՝ շուրջ 40 կգ քաշով (2 փուֆ 20 ֆունտ), որի վրա եղել են երեք գոտի՝ զարդարված գնդիկներով և 12—12 թերթանի վարդյակներով: Զանգի վրա պատկերված է եղել նաև մի գեղեցիկ խաչ, որի թևերը ավարտվել են ելնդավոր զարդերով: Զանգն ուսումնասիրող բազմաճմուռ մասնագետ Հ. Օրբելին աներկբա ապացուցում է, որ խնդրո առարկա զանգը պետք է որ ձուլված լիներ 12—13-րդ դարերի ընթացքում Անիի պղնձաձուլական որևէ արհեստանոցում: Նման եզրակացության Օրբելին հանգել է զանգի վրա եղած զարդերի մանրազնին արվեստագիտական վերլուծությամբ¹⁵:

Մեկ այլ, իր չափերով բավականին փոքր զանգի մասին հաղորդում է Ս. Փափազյանցը¹⁶: Նրա վկայությամբ այդ զանգը գտնվել է Վայոց ձորի

¹¹ Զանգը այժմ գտնվում է Եղեգնաձորի շրջկենտրոնի գավառագիտական թանգարանում:

¹² Գնդեվանքում գտնված զանգերի մասին, տե՛ս Քաջբերունի, «Փորձ», 1877/78, էջ 358, Ղ. Ալիշան, Սիսական, էջ 107, Ս. Բարխուդարյան, Դիվան—3, էջ 20, Ա. Քալանթարյան, Տաթևի վանքի զանգերը և նրանց արձանագրությունները. տե՛ս «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 116:

¹³ Արձանագրությամբ զանգը Ս. Բարխուդարյանի վկայությամբ կշռել է 32 կգ: Տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիվան—3, էջ 20:

¹⁴ Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 369:

¹⁵ Տե՛ս. И. Орбели, Записки Восточного отделения имп. Русского археологического общества, т. 20, вып. 1, (1910), СПб. 1912, ինչպես նաև И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. 175—187, հոդվածը վերնագրված է. «Колокол с анлийскими орнаментальными мотивами 12—13 века»:

¹⁶ Տե՛ս Ս. Փափազյանց, Հնությունք վանորեից Հայոց, գիրք 5, Սիսեաց աշխարհ, Վաղարշապատ, 1895:

Ռաջախալու գյուղում: Հետագայում զանգի լուսանկարը մտել է Նախիջևանի փոխանորդ Գրիգոր վարդապետ Հակոբյանի հավաքածուի մեջ:

Պղնձե երկու համեմատաբար փոքր զանգ գտնվել է Գառնի ամրոցի միջնադարյան շերտի պեղումների ժամանակ, որոնցից մեկի մասին ակադ. Բ. Առաքելյանը գրում է. «... արտաքին մակերեսի վրա վերևի մասում շուրջահակի անցնում է մի գոտի, իսկ նրանից ցած, մինչև զանգի շուրթը ամբողջ մակերեսը ունի քիմիկոսների օգնությամբ բաժանված է պսակաթերթերի: Զանգի ցածի եզրերը պսակվում է ուռուցիկ գոտիով»¹⁷: Ուսումնասիրվող զանգն ունի ընդամենը 19 սմ բարձրություն: Այն շարվիելուց հետո վերանորոգվել է, ինչպես հավաստում է Հ. Պետրոսյանը, որի հետևանքով զանգի վերնամասում արված են երկու անցք՝ հավանաբար սկզբնապես զանգակի հիմքին ամրացված լեզվակը պոկվելուց հետո լարերի օգնությամբ կապելու համար¹⁸:

Համանման մի փոքրիկ զանգ գտնվել է 1958 թ. Վայոց ձորի Ցախայց քարվանքի սուրբ Աստվածածին քառախորան եկեղեցու մոտ, շուրջ 1,3 մ խորությունում պղնձե այլևայլ իրերի հետ միասին: Զանգը ունի 10,5 սմ բարձրություն և 8 սմ ստորին մասի տրամագիծ: Զանգի մակերեսը հարթ է: Ստորին մասում ունի երկու հորիզոնական կիսազնդածե գոտիներ: Զանգի վերին մասը ունի ուղղանկյուն հիմքով տափակ ելուստ, որի վրա կախելու համար անցք է արված: Նույն հուշարձանից գտնվել է նաև վերին մասում զույգ հորիզոնական գոտիներով զանգակի լեզվակ և պղնձե կախիկ¹⁹:

Ըստ Բ. Առաքելյանի²⁰, դատելով տվյալ զանգերի չափերից՝ կարելի է պնդել, որ դրանք գործածվել են ուղտերի, ձիերի ու ավանակների վզից կախելու համար: Քարավանների կենդանիները զանգակներով զարդարելը Արեւիկայում շատ հին սովորություն էր, որը պահպանվելով՝ հասել է մինչև մեր օրերը²¹:

Սյունիքում գտնված երկու հոյակապ զանգերի մասին հոգված է հրատարակել Ա. Քալանթարյանը²²: 1970 թվականին Տաթևի վանքի ավերված զանգակատան պեղման-մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է երկու հսկա զանգ՝ յուրաքանչյուրը շուրջ 300 կգ քաշով: Զանգերի վրա կան գեղագիր արձանագրություններ Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի անունից: Դրանք թվակիր են և ձուլվել են 1302 ու 1304 թվականներին, միևնույն անձի՝ պատմիչ Ստ. Թրբելյանի պատվերով:

Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածին վանքի զանգակատան արևմուտյան պատի խորշի երեսին կա 11 տողանոց, բավականին հողմնահարված մի արձանագրություն, որի բովանդակությունը, ըստ Ս. Բարխուդարյանի, մոտավորապես հետևյալն է. «Թվին :ԶԿԹ: (=1330) պարոնութեան... կամաւ բարեբարին Աստոճոյ, Ես Յոհանէս եւ կենակից իմ Թաճն շինեցաք զանկակս եւ զտուն նորա: Տվաք :Կ: (60) ծնած... Արդեանց... պարոն Բուրթէլ...» և

¹⁷ Գառնի 3, էջ 56:

¹⁸ Տե՛ս Հ. Պետրոսյան, Ազգ. աշխ., էջ 46:

¹⁹ Տե՛ս Հ. Մկրտչյան, Ցաղաց քար վանքը Վայոց ձորի միջնադարյան հուշարձանների համալիրում, Ատենախոսություն, Երևան, 1994, էջ 92—93, 95, աղ. 31, 3:

²⁰ Գառնի 3, էջ 56:

²¹ Ավելորդ չէ հիշել, որ դեռևս 3—2-րդ հազարամյակներում աման զանգակները լայն կիրառություն են ունեցել բնակչության կենցաղում, որի մասին վկայում են Հեգրի Լեյարդի պեղումները Ասորեստանում: Նիսիի պալատական սենյակներից մեկում պղնձե և բրոնզե քազմաթիվ իրերի թվում հատնաբերվել են նաև 80000 բրոնզե զանգակներ, որոնք այժմ պահվում են Բրիտանական թանգարանի պահոցներում:

²² Տե՛ս Ա. Քալանթարյան, Ազգ. աշխ., էջ 115—123:

այլևս²³, Իսկ Քանահատ-Գլաձորի վանական համալիրի մեջ մտնող Ստեփանոս Սյունեցուն նվիրված եկեղեցու հարավային պատին կարդում ենք. «Կաման Աստծոյ, ես Պետրոս յիմ հալալ արդեանց ետու ծախս զանկակիս, միաբանքս սահմանեցին : Բ: Ժամ երեւման խաչին: Կատարիչքն արհն[ին]»²⁴: Վերջին արձանագրութիւնը թեև թվական չունի, բայց անվիճելի է, որ պատկանում է 13-րդ դարի վերջին կամ 14-րդ դարի առաջին կեսին, հետևաբար ժամանակակից է առաջինին: Դատելով նրանց բովանդակութիւնից, պարզվում է՝ մի դեպքում 60 դահեկան է տրվել զանգակի և զանգակատան ծախսի համար, մյուս դեպքում երկու պատարագ է պահանջվել միայն զանգակի ձուլման համար: Իսկ մենք տվյալ ժամանակաշրջանի նվիրատվական մի շարք արձանագրութիւններից գիտենք, որ մեկ պատարագը արժե 20 դահեկան, երկուսը՝ 40, երեքը՝ 60 և այլն: Կնշանակի 13—14-րդ դարերում զանգերի ձուլումը արժեք 40 դահեկան, որն ինքնին բավականին մեծ գումար էր:

Զանգակ ձուլելու կամ գնելու ու վանքերին նվիրելու հետաքրքիր արձանագրութիւնների ենք հանդիպում Արցախի հուշարձաններում: Գանձասարի վանքի արձանագրութիւններից մեկում կա հետևյալ վկայութիւնը. «Թվ. ՊԺ (=1361) Իշխանութեամբ մեծի Իւանէի, ես տէր Կոստանդ մեծ փափազանաւք գնեցի զանկականիս, սուրբ ուխտս բերի»²⁵: Նույն Արցախի Մարտակերտի շրջանում Եղիշ Առաքյալ կամ Ջրվշտիկ վանքում եղել է երկու զանգ, որոնցից մեկի վրա հղած արձանագրութիւնից իմանում ենք նրա ձուլման համար վճարվող գումարը: Ահա այդ արձանագրութիւնը. «Յիշատակ է զանգակս Ղազարին, որ է որդի Քիրիզորին, է թոռն Ծարին. Յուսէփ որդի Պապէն, որ է Պօղոս Թուլէր (հիւսն). Ծս Շահնա կարմրեցի (ձուլեցի) գինն է : Գ: Թու ման»²⁶:

Նույն Արցախի Բանանց գյուղի մոտ գտնվող Քարգմանչաց անապատում հայտնի է 17-րդ դարի մի արձանագիր զանգ՝ հետևյալ տեղեկութիւնով. «Յիշատակ է Ապովի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին. Թվին ՌՃԺԶ (=1667)»²⁷:

Ի մի բերելով միջնադարյան Հայաստանի՝ միայն Սյունիքի և Արցախի տարածքից զանգերի և զանգակների մասին հղած մեզ հայտնի տեղեկութիւններն ու նրանց վրա հղած արձանագրութիւնները՝ կարելի է աներկբա պնդել, որ Հայաստանում, հատկապես 13—17-րդ դարերի ընթացքում տարածված էր ինչպես խոշոր՝ 32-ից մինչև 300 կգ քաշ ունեցող զանգերի ձուլումը, որոնք զարդարում էին վանական համալիրների գլխավոր եկեղեցիները կամ այդ նպատակով կառուցված զանգակատները (Հաղբատ, Սանահին, Հովանավանք, էջմիածնի Մայր տաճար, Հոփսիմե և այլն), այլև ձուլվել են փոքր չափերի զանգակներ, որոնք ունեցել են պրակտիկ-կենցաղային նշանակութիւն, ինչպիսիք են Գառնիում, Գնդեվանքում, Յաղաց քարի վանքում, Քանահատ-Գլաձորում գտնվածները: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ իրավացի է պրոֆ. Բ. Առաքելյանը, երբ պնդում է, թե զանգերի մի մասը (հավանաբար միջին մեծութիւն) քաղաքներում օգտագործվել են նաև օրվա ժամերը ազդարարելու համար: Կողմնակի վկայութիւններից պարզ է դառնում, որ զանգերը կախում էին քաղաքի պարսպից կամ որևէ բարձր աշտա-

²³ Ա. Բարխուդարյան, Դիվան—3, էջ 101, արձ. № 287:

²⁴ Անդ, արձ. № 29:

²⁵ Ա. Բարխուդարյան, Աշխ., էջ 177—178:

²⁶ Ա. Բարխուդարյան, Նույն տեղում, էջ 286: Հարկ է նշել, որ թումանը Բավասար է 10000 արծաթի կամ 10000 պարսկական դինարի. տե՛ս Ստեփանոս Օրբելյանի Պատմութեան 1876 ծանոթագրութիւնը:

²⁷ Նույն տեղում, էջ 285:

րակից և հասուկ մարդիկ ազդարարում էին ժամանակը ժամ առ ժամ, արևի ժամացույցի ցուցումներին համապատասխան: Այս միտքը ապացուցվում է ներսես Շնորհալու հաճելուկներից մեկով, ուր ասվում է.

Երկու եղբայր միմեանց նման,
Որք են շարեալ ի մի գերան,
Իբր զմահապարտ են ի կախման,
Փամէ ի ժամ զաղաղակ բառնան²⁸:

Միջնադարյան քաղաքները զգում էին օրվա ժամերը բարձրաձայն հրնչեցնելու անհրաժեշտությունը՝ կապված քաղաքի դարպասների և շուկաների բացման ու փակման, առևտրական կրպակների և արհեստանոցների բացման, աշխատանքի սկիզբը և ավարտը ազդարարելու պահանջի հետ:

Թանահատ-Գլաձորի վանական համալիրի պեղման-մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված մետաղե գտածոների մեջ իր առանձնակի տեղն ունի բրոնզե մի կանթեղ-խնկաման, որը գտնվեց վանքից դեպի արևմուտք թեք իջնող լանջի վրա: Այն կարելի է դասել միջնադարյան Հայաստանի պղնձագործ վարպետների պատրաստած գեղարվեստական մետաղագործության լավագույն ստեղծագործությունների թվին: Խնկամանը ձևով խիստ նման է միջնադարյան Հայաստանում և մինչև այսօր լայն կիրառություն ունեցող բուրվառներին, բայց նրանցից տարբերվում է մեծությամբ, կշռով և գործածության եղանակով:

Թանահատ-Գլաձորում գտնված բրոնզե կանթեղ-խնկամանը նրբարվեստ մի անոթ է՝ լավ պահպանված, համարյա անթերի: Զարդաքանդակները դիւնամիկ են, օժտված ներքին շարժման մեծ ուժով: Հաճախ միևնույն պատկերի վրա ներկայացված են մի քանի դեմքեր, հարստացնելու համար տվյալ պատումի բովանդակությունը: Նրա շափերն են՝ բարձրությունը 11 սմ, բերանի տրամագիծը՝ 12,7 սմ, նստուկինը՝ 7,5 սմ, նստուկի բարձրությունը՝ 1,6 սմ, իսկ իրանի ուռուցիկ մասի տրամագիծը՝ 14,5 սմ, արտաքին շրջանագիծը՝ 47 սմ²⁹: Պատկերաքանդակները արտահայտիչ են, ձևերը՝ ճկուն, անցումները՝ թեթև ու սահուն: Գնդաձև իրանը պսակում են Քրիստոսի վարքը բովանդակող դրվագներ հետևյալ հաջորդականությամբ.

Մեռելիք.— Կենտրոնում Քրիստոսի խանձարուրն է մսուրքի մեջ: Նրա վրա հակված են երկու կենդանիներ, որոնք, ըստ էության, պետք է լինեին ոչխարներ կամ եզ ու ավանակ: Տվյալ դեպքում կենդանիները շատ սխեմատիկ են, և հնարավոր չէ որոշակի պնդել նրանց ինչ լինելը: Խանձարուրի ձախ կողմում Տիրամայրն է՝ կիսապսակած դիրքում, աջ ձեռքը գոտկատեղին, ձախը՝ թույլ դրված կրծքին: Նա ուսերն ի վար ծալքավոր գլխաշորով է, որը նշում է ամուսնացած կին լինելու հանգամանքը: Նրա զգեստի վրա կա մարդկային մի գլուխ: Խանձարուրի աջ կողմում Հովսեփն է, ուսերին՝ թիկնոց, ձախ ձեռքը հենել է այտին, աջը՝ ծնկանը, մտազբաղ է: Նրա հագուստը ծալքավոր է, դեմքը հետագայում անզգույշ վերաբերմունքից եղծվել է: Ոտքերի մոտ պատկերված է մարդկային մի գլուխ:

Մկրտություն.— Տեսարանի կենտրոնում, գետի ալիքների մեջ Քրիստոսն է նստած, ձախ կողմում ոտաբորիկ, ողջ հասակով կանգնածը Հովհաննես Մկրտիչն է, որը ափով ջուր է լցնում Քրիստոսի գլխին: Նրանից աջ Հայր

²⁸ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Բ. Ա, 1958, էջ 161:

²⁹ Տե՛ս Ն. Գ. Հակոբյան, Ի. Գ. Ղարիբյան: Հ. Ա. Մեղրոնյան, Միջնադարյան Հայաստանի խնկամանները, ԲՅԸ, 1988, № 1, էջ 110:

Աստօժ ձեռքն է աղաձնու կերպարանքով, որով մատնանշում է Քրիստոսին՝ ըստ Ղուկասի Ավետարանի հետևյալ կերպ. «... Եւ գալ ձայն յերկնից որ ասէր, Դու եւ Ուրդի իմ սիրելի, ընդ քեզ հանեցայ»³⁰, ընդգծումը մերն է— Ի. Ղ.):

Խաչելութիւն.— Կենտրոնում փայտի վրա խաչված Քրիստոսն է՝ ողջ հասակով, բաց աչքերով, հանգիստ դեմքով, առանց ցավի արտահայտութեան և շրջապատի հետ հաղորդակցվելու: Նրա հագին ալիքածև զարդերով երկար հագուստ է: Քրիստոսի աջ և ահյակ կողմերում նրա հետ խաչված երկու ավազակների գլուխներն են պատկերված: Խաչելութեան թևերի տակ աջից Հովհաննես Ավետարանիչն է՝ սրածայր գլխարկով, ձախից՝ Տիրամայրը և ժողովրդի ներկայացուցիչները: Սրանցից ավելի ձախ պատկերված են երկու անձնավորութիւն: Մեկը՝ սրածայր գլխարկով և երկար մորուքով, մյուսը, որ ամբողջ հասակով է, թևերին հենված՝ պահում է ինչ-որ մեկի մարմինը: Սովորաբար այս տեսարանը չի հանդիպում համանման կանթեղ-խնկամանների կամ բուրվառների վրա, ուստի և այն մեկնաբանելը դժվար է:

Հնարավոր է, որ սա Քրիստոսի խաչելութեանը նախորդող դատավարութեան տեսարանն է, ուր պետք է ներկայացվեն Պիղատոսն ու Հերովդեսը: Եթե մեր ենթադրութիւնը ճիշտ է, ապա պետք է այս պատկերագրութիւնը անշատ դիտենք խաչելութեան տեսարանից՝ առանձնացնելով դատավարութեան ինքնուրույն տեսարան:

Համբարձում.— Սովորաբար համանման խնկամանների, բուրվառների վրա խաչելութեանը հաջորդում է խաչից իջեցնելու և թաղելու տեսարանը: Բայց մեր օրինակի վրա պատկերված է Քրիստոսի գերեզմանը (կենտրոնում) սյուների ձևով, որից վերև, ձեռքերը երկինք պարզած, Քրիստոսն է, որ համբարձվում է: Նրանից ձախ կանգնած է մի տղամարդ՝ երկար մորուքով, աջ ձեռքը կրծքին: Սա, ըստ նոր կտակարանի ավանդութեան, պետք է լինի Նիկոդիմոսը կամ Հովսեփ Արիմաթացին, որը խնդրում է Պիղատոսին խաչված Քրիստոսի դիակը իրեն հանձնել՝ թաղելու համար: Իսկ կենտրոնական պատկերի աջ կողմում յուզաբեր կանայք են՝ Մարիամ Մագթաղենացին, Հակոբի Մարիամը և Սողոմեն³¹:

Կանթեղ-խնկամանի հատակին դրսի կողմից պատկերված է Քրիստոսը՝ դահին բազմած, ձեռքին՝ գավազան, գլխին՝ լուսապսակ: Սա միակ պատկերն է, որ ձուլումից հետո չի ենթարկվել լրացուցիչ հարդարման, այդ իսկ պատճառով խիստ սխեմատիկ է և անկատար:

Սկզբնաղբյուրների, հնագիտական ու ազգագրական նյութերի հպանցիկ քննութիւնը ցույց է տալիս, որ Միջնադարի Հայաստանի հոգևոր հարուստ կենցաղում լայն գործածութիւն է ունեցել արարողական սպասքը: Շնորհաշատ հայ վարպետներն իրենց արհեստանոցներում՝ «գործոց» տներում, կերտում էին ոչ միայն աշխարհիկ գործածութեան բարձրարվեստ առարկաներ, պերճանքի զարդեր, այլև արարողական շքեղ սպասք: Վերջինիս զարդապատկերների հարուստ թեմաներով, պատրաստման հմտութեամբ և հարդարման մեծ վարպետութեամբ կոչված է մեկ անգամ ևս հավաստելու այն իրողութիւնը, թե գեղարվեստական մետաղամշակութիւնը միջնադարյան Հայաստանում

³⁰ Ղուկ. Գ, 22:

³¹ Մարկ. գլ. ԺԳ, 40, ԺԶ, 1, Յովհ. գլ. ԺԹ, 25:

տանում եղել է կիրառական արվեստի ինքնուրույն և զարգացման բարձր աստիճանի հասած ճյուղերից մեկը³²։

Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր կենցաղում լայն գործածություն են ունեցել խնկարկման բրոնզե անոթները, որոնց մի քանի նըմուշներ պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում, Եղեգնաձորի, Ղափանի ու Կումայրիի երկրագիտական թանգարաններում, որոնց ավելացավ նաև մեր կողմից հայտնաբերածը Թանահատ-Գլաձորի վանական համալիրից, որը այժմ պահվում է Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանում։

Խնկարկման անոթները Հայկական լեռնաշխարհում հայտնի են դեռևս ուրարտական ժամանակներից։ Թեյշեբախի (Կարմիր-Բլուր) մառաններից մեկում, կազե զոհասեղանի մոտ, աստվածների արձանիկների հարեանությունը գտնվել են խնկարկման սկիհատիպ անոթներ (1-ին հազ. մ. թ. ա.)³³։

Քրիստոնեությունը մի շարք ավանդությունների ու սովորույթների հետ միաժամանակ ժառանգեց նաև բուրավետ յուղերի, խեժերի ու անուշահոտ բույսերի ծխարկումը (կամ խնկարկումը)։ Այդ նպատակի համար օգտագործվում էին մարեմա, կնդրուկ, հալվե³⁴ և մուշկ³⁵։ Վերջիններս կոչվում էին անուշ խունկ և ծխվում էին հատուկ անոթներում. «զԱնօթ սրբոյ պատարագին գունակ բուրման անոյշ խընկին»³⁶։

Հայոց մեջ որպես խնկարկման անոթներ օգտագործվել են բուրվառներն ու խնկամանները, որոնք մի առանձին շուք էին հաղորդում հանդիսավոր արարողություններին։

Խնկարկելու նպատակը ոչ միայն եկեղեցիների ու տաճարների, բեմերի, խորանների, եկեղեցական սպասքի օժումն էր մեռոնով (ըստ ընդունված կարգի՝ «սբ. իւղն օժութեան ի դրոշմել զմկրտեալս, յօժանել զքահանայս և զսբ. սեղանն և զսբ. սպասս... օժանելն զքարինս ասուածայնովն մեռոնաւ») ³⁷, այլև օդի մաքրումը խնկի անուշահոտ բուրմունքով, որը կրոնական ծիսակատարության ազդեցիկ միջոցներից մեկն էր։

Խնկարկման անոթները-խնկամանները կիսազնդաձև, ուռուցիկ իրանով փոքր թասեր են, բարձր ոտք-հատակով՝ պատվանդանով, որը մեր մատենագրության մեջ հայտնի է կառույց անունով³⁸։ Շուրթի մասում գնդաձև իրանն ավարտվում է լայն ժապավենով։ Վերջինիս վրա տեղավորված են երեքական դեկորատիվ (կեղծ), ելուստաձև և իրական ունկեր։ Ունկերից յուրաքանչյուրը «կախ ունէր մէկական անբառնալի»³⁹ կամ շղթա։ Շղթաներն ամրացված էին վերին ագույցին կամ կափարիչին (եթե դա բուրվառ էր— ծան. Ի. Ղ.)։ «շու-

³² Ի. Հակոբյան, Հայաստանի գեղարվեստական մետաղը, էջ 86։ Ինչպես նաև Ի. Հակոբյան, Ի. Ղարիբյան, Ա. Մելքոնյան, Միջնադարյան Հայաստանի խնկամանները, ԲԵՀ, էջ 100։

³³ Տե՛ս, Բ. Բ. Пиотровский, Кармюр блур, т. I, Ереван, 1952, էջ 28, նկ. 8, էջ 84, նկ. 17։

³⁴ Հալվե— խոտ դառն հյութով ի կարգի դեղոց և խնկոց։ Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Բ. 2, Վեհտիկ, 1897, էջ 4։

³⁵ Մուշկ— պարսկերեն մուշ բառից, որ է մուկն, մկնաձև և մկնափ կեղևափ ի Հընդիկա՝ անուշահոտ և իւղ նորս... որպես և բեղկ մշկոյ՝ է փխիկ, այսինքն կատու մշկաբեր։ Նույն տեղում, էջ 300։

³⁶ Ներսես Շնորհափի, Ողբ Եդեսիոյ, Երևան, 1963, էջ 77։ Տե՛ս նաև Ի. Հակոբյան, Հայաստանի գեղարվեստական մետաղը, էջ 86։

³⁷ Նոր Բառգիրք Հայկազյան լեզուի, Բ. 2, էջ 1025։

³⁸ Մաղաքիա արք. Օրմանեան, Միսակաճ բառարան, Անթիլիաս, 1956, էջ 92։

³⁹ Արքազան Պատարագամատոյցք հայոց, Վիեննա, 1897, էջ 98։ Յովհաննու Իմաստասերի Աւանցոյց Մատենագրութիւնք, Վեհտիկ, 1888, էջ 141։

շանն կամ վերին, ագույցն, որո վերև կար, ըմբռնելիքն ի վերին ծայրին»⁴⁰,
Կափարիչն ուներ փոքրիկ բռնակ՝ այն ձեռքում պահելու համար:

Խնկարկման ժամանակ խնկամանները կախվում էին առաստաղից, սըր-
բապատկերների առջև, կամ դրվում սուրբ սեղանի վրա⁴¹: Ի հաստատումն
վերն ասվածի, կարող ենք վկայակոչել Անիի Գագկաշեն եկեղեցում գտնված
խնկամանը: Պահպանվել են սովոր քանակով խոշորահատիկ շղթայի հա-
տիկներ, որոնք այնքան կոպիտ ու զանգվածեղ են, որ հնարավոր չէ այն ձեռ-
քում պահել: Դրան հակառակ, բուրվառները պահվում էին ձեռքում, և այդ
իրավունքը, ըստ հայոց եկեղեցական կարգի, պատկանում էր սարկավագ-
ներին: Նրանք ձախ ձեռքով պիտի պահեին Ավետարանը, աշով՝ բուրվառը⁴²:
Չնայած, բուրվառները միայն իրենց չափերով և գործածության եղանակով
են տարբերվում մեզ հետաքրքրող խնկամաններից, բայց նրանց ձևը և վրան
եղած պատկերազրույթյունները համարյա թե նույն են, ինչ խնդրո առարկա
խնկամաններն են: Այնուամենայնիվ մենք դրանք հատուկ քննարկման նյութ
չենք դարձնում, ուստի անդրադառնում ենք միայն Հայաստանի տարածքում
գտնված և մեզ հայտնի խնկամաններին:

Ուսումնասիրության առարկա խնկամանները պատրաստված են ձուլման
եղանակով, մոմե մոդելի ու կավի օգնությամբ: Այդ եղանակը օգտագործում
էին միջնադարի վարպետները առավել բարդ ու նուրբ իրերի ու զարդերի
պատրաստման համար: Այդ նպատակով վերցնում էին հատուկ կավ, որին
խառնում էին ավազ և ձյութ: Ստացվում էր փխրուն, բայց լավ իրար կպչող
զանգված⁴³: Դրանից պատրաստում էին խնկամանի (այս դեպքում) կամ այլ
ձուլվելիք առարկայի մոդելը, ապա այն պատում էին մոմի թանձր շերտով:
Մոմի վրա փորագրում էին համապատասխան պատկերաքանդակները, որից
հետո մոմաշերտը պատում էին լավ մշակված մանրահատիկ կավով ու շո-
րացնում: Ձուլվելիք առարկայի կաղապարը արդեն պատրաստ էր:

Մինչ հալված մետաղի լցնելը, կաղապարը տաքացնում էին և հալած մո-
մը կաղապարի ներքևի մասում թողնված անցքից հեռացնում էին: Իսկ կա-
ղապարի վրա վերևից սովորաբար թողնվում էր երկու անցք: Մեկը ձուլ մե-
տաղը լցնելու, մյուսը կաղապարի ներսի օդը դուրս մղելու համար⁴⁴: Ձուլլ
մետաղը լցվելով բռնում էր մոմի տեղը: Սառչելուց հետո կաղապարը, եթե
փեղկավոր էր, ապա բացում էին, իսկ եթե միափեղկ էր՝ ջարդում էին ու հա-
նում պատրաստի անոթը: Վերջում անոթի միջի կպչուն մասսան հեռացնում
էին սուր գործիքի օգնությամբ:

Բայց դրանով գործը չէր ավարտվում: Անոթները, այս դեպքում խնկա-
մանի կամ բուրվառի վրա եղած պատկերաքանդակները ենթարկվում էին լրա-
ցուցիչ մշակման: Դրա լավագույն վկայությունը խնկամանների վրա եղած
պատկերների և նրանց նստուկի վրա եղածի միջև տարբերությունն է, որով-
հետև վերջինս լրացուցիչ մշակման սովորաբար չէր ենթարկվում:

Հայաստանի տարածքում, մեր գտած օրինակի հետ միասին մինչև վեր-
ջերս հայտնի էր ընդամենը յոթ խնկաման: Այժմ դրանց քանակը ավելացավ

⁴⁰ Վ. Հացուճի, Պատմութիւն Քիւն Քայ տարագի, Վեներտիկ, 1928, էջ 141:

⁴¹ Ա. Գևորգյան, Արհեստներն ու կենցաղը Քաղկական մանրանկարներում, Երևան,
1978, տախտ. 21, նկ. 2—3: Նան՝ S. Der-Herssian, The Armenians, London. 1969. p. 135.

⁴² Սրբոյն՝ Ներսեսի Լամբրոնացոյ Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ և մեկնու-
թիւն խորհրդոյ պատարագին, Վեներտիկ, 1847, էջ 92, Ստ. Օրբելյան, Աշվ. աշխ., գլ. ԻԷ,
էջ 183, Վ. Հացուճի, Աշխ., էջ 354—355:

⁴³ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում,
Բ: 1, էջ 157:

⁴⁴ Տե՛ս Առաքելյան:

ևս ժեկով: Վայոց ձորի Արկազի սուրբ Խաչ կոչվող վանքի տարածքից պատահականորեն գտնվել է խնկաման, որն այժմ պահվում է Եղեգնաձորի գավառագիտական թանգարանում՝ 1347/Ե—5803 գույքահամարի տակ: Դրանք ուսումնասիրվել են Ն. Հակոբյանի և ուրիշների կողմից⁴⁵: Ուստի հարկ չենք համարում գրանց քննությունը կատարել մանրամասնորեն, այլ նշենք միայն այն կարևոր և էական տարբերությունները, որ նկատելի են ինչպես Հայաստանում գտնված խնկամանները, այնպես և աշխարհի տարբեր թանգարաններից հայտնի համանման նյութերի միջև:

Խնկամաններից երկուսը, որոնք իրարից բոլորովին չեն տարբերվում, գտնվել է Անիի Գագաշեն եկեղեցու պեղումների ժամանակ⁴⁶: Երկու անոթներն էլ կոպիտ են՝ համեմատած մյուս օրինակների հետ, անցումները՝ շոր, պատկերները՝ սխեմատիկ, թեև ձուլումից հետո փորձել են երկաթե գրիչի օգնությամբ հարդարել: Վերոհիշյալ խնկամանների վրա հանդիպում են նոր ու հետաքրքիր մանրամասներ. ծննդյան տեսարանում Քրիստոսի խանձարուրին աչից ու ձախից հակված են երկու գազանակերպ կենդանիներ: Դասական պատկերագրության մեջ այդ տեսարանում նման պատկերներ հանդիպում են առաջին անգամ և իրենց զուգահեռը չունեն: Կարելի է կարծել, որ այն զուտ հայկական միջավայրի արդյունք է:

Խնկամաններից երեքը, որ գտնվել են տարբեր տեղերում (Արցախ, Մարմաշեն), առանձնանում են պատրաստման բարձր արվեստով, պատկերների արտահայտչականությամբ, թեթև ու սահուն անցումներով, մեղմ զարդաքանդակներով: Դրվագները մեկը մյուսից բաժանվում են տերևազարդ փարթամ շիվերով կամ թփերով: Մեր օրինակը իր պատկերաքանդակների նրբությամբ մոտ է այս անոթներին, բայց և այնպես նույն վարպետի գործ չէ, թեև ուզել իր սյուժեով:

Նախավերջինը գտնվել է 1973 թվին Որոտան գետի մոտ: Սրա պատումները իրարից բաժանվում են երեք զարդարուն օղերի պատկերներով, որոնք իրանին ձուլված են որպես ոնկ: Խնկամանի վրա թաղման տեսարանում, Տիրամոր դիմաց, դեմքով դեպի աճյունափոսը, Հովհաննես Ավետարանիչի փոխարեն նստած է հրեշտակակերպ մի անձնավորություն՝ գլխին լուսապսակ, ձեռքին խաչազարդ գավազան: Այս պատկերը չունի բաղդատելի զուգահեռներ և հանդիպում է առաջին անգամ: Մասնագետները այդ անձնավորությանը նույնացնում են խնկամանի պատվիրատուի հետ և եզրակացնում, որ այն հավանաբար պատկանել է Տաթևի վանքին⁴⁷: Եվ վերջապես, վերջին խնկամանը գտնվել է պատահականորեն, 1994 թ. Եղեգնաձորի շրջանի Արկազի սուրբ Խաչ եկեղեցու մոտ՝ միջնադարյան գյուղատեղիում տարբեր բնույթի կենցաղային իրերի հետ և տեղափոխվել Եղեգնաձորի գավառագիտական թանգարան:

Խնկամանի ընդհանուր բարձրությունը 9 սմ է, բերանի տրամագիծը՝ 12 սմ, նստուկինը՝ 7 սմ, նրա գոտկատեղի ուռուցիկությունը 41 սմ է: Բերանի շուրջ անցնում է 2 սմ լայնությամբ ժապավենազարդ⁴⁸: Խնկամանի վրա, ինչ-

⁴⁵ Բ. Առաքելյան, Քաղաքներ..., էջ 159. Ն. Հակոբյան, Ազգ. աշխ., էջ 38—42, ինչպես նաև՝ Ն. Հակոբյան, Ի. Ղարիբյան, Ա. Մելքոնյան, Ազգ. աշխ., էջ 110—119:

⁴⁶ Տե՛ս Ի. Օրբելի, Изобразные труды. ст. 70. Ե. Մուշեղյան, Ազգ. աշխ., էջ 122—123, Ազ. 28/1—2:

⁴⁷ Տե՛ս Ն. Հակոբյան, Ի. Ղարիբյան, Ա. Մելքոնյան, Ազգ. աշխ., էջ 116:

⁴⁸ Նորասյուս խնկամանի մասին սիրահոժար մեզ հայտնեցին ԳԱ հնագիտության ինստիտուտի գիտաշխատողներ Ն. Հակոբյանը և Հ. Մելքոնյանը, որոնք Ռոպված են նախապատրաստում տպագրության համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում հեղինակներին այս տեղեկությունների համար:

պես և սպասվում էր, պատկերված են Ավետուժը, Եղիսաբեթի և Մարիամի հանդիպումը, Մնունդը, Երկրպագությունը, Խաչելությունը և Թաղումը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Երկրպագության տեսարանում մարդկային գլխի (?) կամ դրան նման մի պատկերի առկայությունը, որը նորույթ է նմանօրինակ խնկամանների պատկերագրությունում:

Այս անոթի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործունենք տեղական արհեստագործական կենտրոնի, մասնավորապես Տաթևի վարպետների արտադրանքի հետ, որով համարվում է նախկինում գտնվածների շարքը, և հիմնավորվում Տաթևի՝ պղնձաձուլական կենտրոն լինելու տեսակետը:

Ի մի բերելով Հայաստանում գտնված խնկամանների վրա եղած ավետարանական պատկերագրությունը, նկատելի է, որ սրանց դրվագների թիվը չի անցնում յոթից, իսկ երկու դեպքում այն վեց է: Մինչդեռ Ասորիքից, Պաղեստինից, Եգիպտոսից, Ղրիմից, Վրաստանից և այլ վայրերից գտնվածների վրա դրանք վեցից տասնմեկն են: Այդ ընդգծված տարբերությունը, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս որոշելու խնկամանների ծագման կենտրոնի հարցը:

Ուսումնասիրողների մեծ մասը⁴⁹, խնդրո առարկա խնկամանների հայրենիքը համարում են Ասորիքը, Պաղեստինը և վերագրում են 6—7-րդ դարերին⁵⁰: Բայց վերջին տարիների գտածոներից և նրանց պատկերագրություններում եղած տարբերությունները հաշվի առնելով՝ մենք համակարծիք ենք Հայաստանի տարածքում հայտնաբերված խնկամաններն ուսումնասիրող Ն. Հակոբյանի և այլոց հետ, որ դրանց արտադրության հայրենիքը Հայաստանն է՝ մասնավորապես Անին և Տաթևի վանքը, որին կից (Տաթևի վանքին) արհեստանոցների և արհեստավորների գոյության մասին տեղեկություն է հաղորդում պատմիչ Ստեփանոս Օրբելյանը⁵¹:

Նման եզրակացության համար հիմք են ծառայում ինչպես պատկերաքանդակների սյուժեների բովանդակության տարբերությունները, այնպես և հարդարման առանձնահատկությունները՝ դարձածալ ունեցող զգեստներ, զարդարված եղենազարդով, կարճ, մինչև ծնկները հասնող հյուսածո գոտիներով գոտևորվող հանդերձներ, գլխանոց, որոնց ճակատին կան մանր ծալքեր և հիշեցնում են սրածայր վեղարով գլխարկներ:

Խնկամանները, մեր կարծիքով, հիմնականում թվագրվում են 11—13-րդ դարերով: Բայց այդ թվագրումը առայժմ նախնական է և կարիք ունի խոր մասնագիտական վերլուծման ու ճշգրտման⁵²:

Հաջորդ առարկան Հայաստանի միջնադարյան հնավայրերից մինչև հիմա հայտնի չէ, հետևաբար զուգահեռներ չունի ու խիստ հետաքրքրություն է առաջացնում: Այն առաջին հերթին դանակի շեղը է հիշեցնում կամ դռան ծխնի, բայց ուշադիր զննումը չի հաստատում նման ենթադրություն: Խնդրո առարկա իրի մեծ մասը կոման օգնությամբ տափակ է, հիմքում լայն՝ 3—4

⁴⁹ Victor H. Elbern, Zur Morphologie der bronzenen weihrauchgefäße aus Palästina. von victor Herbern, P. 447—448: O Pelka, Etn Syro-palästinisches Räuchergefäß, Mitteilungen aus dem Germanischen National Museum, Nürnberg, 1906, S. 85—92: O. Daiton. Byzantine Art and Archaeology, New-York, 1961, p. 107: Գ. Հովսեփյան, Հնության Աշխարհը, էջ 8, Լ. Քյուրտյան, Անագե-պղնձե քուրվառ Նոր Զուղայի վանքի թանգարանին, «Բազմավեպ», 1959, № 9—10, էջ 186 և այլն:

⁵⁰ Ն. Հակոբյան, Աշխ. աշխ., էջ 41:

⁵¹ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Աշխ., էջ 132:

⁵² Տե՛ս Ն. Հակոբյան, Ի. Ղարիբյան, Ա. Մելքոնյան, Աշխ. աշխ., էջ 119:

սմ, իսկ վերջավորութունում՝ 2—3 սմ: Մայրը սկզբնապես թեքված է եղել, որ այժմ ջարդված է: Հնարավոր չէ պատկերացնել, որ սկզբնապես այն ուղիղ է եղել:

Առարկայի կեսը կազմում է պոչի մասը, որը կլորացված է, իսկ վերջնամասում կոեխու օգնությամբ երկու ոչ հավասար օղակաձև բացվածքներ ունի: Ժամանակակից տեսքով առարկայի այդ մասը ծոված է, սկզբնապես հավանաբար ուղիղ է եղել: Թեև չենք կարող պնդել, թե քննարկվող իրը ինչ է եղել կամ ինչի համար է օգտագործվել, այնուամենայնիվ, իր տեսակի մեջ եզակի լինելով, այն ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը: Թվապրման առումով կարող ենք պնդել. դատելով զուգահեռ գտածոներից ու շերտագրութունից՝ այն 13—14-րդ դարերի գործ է և մեր նախնիների կենցաղում անհրաժեշտ առարկա է եղել:

Թանահատ-Գլաձորում գտնված մետաղական իրերի մեջ առանձնանում է մի փոքրիկ կողպեք: Ընդհանրապես ձևավոր, հաճախ կենդանիների ու մարդկային պատկերների նմանությամբ պղնձե կողպեքներ Հայաստանում հայտնի են Անիի, Դվինի, Մեծամորի, Լոռիի, Գառնիի և Բջնիի պեղումներից⁵³: Մեր օրինակը նման չէ վերոհիշյալ հնավայրերից հայտնիներին: Այն առավելապես նմանութուն ունի Ռուսաստանի հնավայրերից, մասնավորապես Խերսոնեսից հայտնի օրինակների հետ, որոնք այժմ պահվում են պետական էրմիտաժում⁵⁴:

Խնդրո առարկա կողպեքները շատ այժմեական են թվում, բայց նրանց զսպանակավոր միջուկի ձևը ծագել է 13—14-րդ դարերում և հարատևել է մինչև ուշ միջնադար: Հատկապես լավ է պահպանվել վերին օղը և ձուլածո իրանը, որն իր ուռուցիկության շնորհիվ շատ հաճելի տեսք ունի: Կողպեքի իրանը կաղապարի օգնությամբ է ձուլված, նրա միջուկը և վերին օղակը պատրաստել են կոման եղանակով: Կողպեքի շափերի փոքրությունը միանգամայն տրամաբանական է դարձնում այն տեսակետը, որ համանման կողպեքները չեն օգտագործվել որպես դռների փականներ, այլ մեր նախնիները դրանով փակել են իրենց սնդուկները, գրոցները և համանման փոքր պահարանները: Դրանով է բացատրվում կողպեքների գոյատևումը այդքան երկար ժամանակ (13—18-րդ դդ.):

Այսպիսով, Թանահատ-Գլաձորից հայտնաբերված մետաղե առարկաները ցույց են տալիս, որ նույնիսկ միջնադարյան վանական համալիրների միաբանությանը խորթ չէր ինչպես բարձրարվեստ իրերի օգտագործումը, նույնպես և առտնին օգտագործվող շատ սովորական կենցաղային իրերը, գործիքները և այլն: Միաժամանակ պետք է նշել, որ մեծ մասամբ այդ մետաղական առարկաները ներմուծված են հարևան և հեռավոր երկաթագործական կենտրոններից, ինչպիսիք են եղել Անի, Տաթևը, Նիզգիսը, Արփան, Սրկղունիքը և այլ իշխանանիստ կամ հոգևոր կենտրոններ:

⁵³ Տե՛ս Ե. Մուշեղյան, Աճիի պեղումներից հայտնաբերված իրերը, պր. 2, աղ. 35, Գ. 2, 3, 4, 7, Ա. Զայնթարյան, Դվին—1, Երևան, 1976, էջ 35—37, Գ. 10/1, Վ. Արաբամյան, Արհեստները Հայաստանում (4—18-րդ դդ.) Երևան, 1956, էջ 55, Գ. 11, Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1978, Գ. 32, Ն. Հակոբյան, Գշվ. աշխ., էջ 28—29, աղ. 2, Գ. 5—6, Հ. Պետրոսյան, Գշվ. աշխ., էջ 44—45 և մեր պեղումների արդյունքները Լոռիում ու Բջնիում:

⁵⁴ Այս մասին մեզ սիրաճոճար հայտնեց միջնադարյան գեղարվեստական մետաղին լավատեղյակ Ն. Հակոբյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

И. Г. ГАРИБЯН — Металлические предметы, обнаруженные в Та-наат-Гладзорском монастырском комплексе.—Предметом исследования стали обнаруженные при раскопках на территории указанного монастырского комплекса орудия труда, оружие, предметы роскоши, металлические изделия светского и религиозного назначения. Материалом особого рассмотрения стали медные колокола и кадильницы. Сравнительному анализу подвергнут весь известный по древней Армении материал, содержание рельефных изображений, дается их искусствоведческая оценка. Это способствовало определению места и времени происхождения изучаемых предметов. Делается попытка выяснить различные цели применения медных колоколов и технические приемы их выплавки и изготовления.